

ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ճշմարտությունը, նույնպես փրկությունը միշտ առարկա է հին և նոր կրոններու, իմաստասիրական և ընկերաբանական գիտություններու քննության:

Մարդու համար զանոնք գտնելու և ըմբռնելու ձգտումը բնական է և անդիմադրելի:

Փրկության մասին եղած բազմաթիվ ուսուցումները կրնան ամփոփվիլ քրիստոնեության մեջ տիրող երեք գլխավոր տեսություններով:

Փրկությունը մեղքի հետևող դատապարտութենե ազատումն է:

Փրկությունը առավել և հավիտենական կյանք վայելելն է: Անմահությունը:

Փրկությունը աշխարհի վրա մարդուն ազատումն է ամեն կարգի նեղութենե, տառապանքե, ցավե և վիշտե:

Ա

Միստիքներուն ըմբռնումով փրկությունը մարդու հոգիին միացումն է Աստուծո հետ:

Այս է հավիտենական երանավետ կյանքը: Անմահությունը:

Այս կերպ իմացված փրկությունը կրնա կարճ պահու մը փորձառությունը լինել ներկա կյանքին մեջ: Անիկա կրնա լիովին իրականանալ հանդերձյալ կյանքին մեջ:

Այս մասին կարելի է գաղափար մը կազմել և ճաշակ մը առնել ներկա կյանքի այն հազվադեպ պահերուն, երբ մարդ կզգա թե մեղքի ծանրութենեն թեթևցած, ազնոր արատներեն սրբված և արդարացած, աղոթքի և խոկումի մեջ իսպառ կկտրվի առօրյա կյանքի հոգերեն և Աստուծո անճառելի տեսքին զմայլանքովը հափշտակված կերանավորվի:

Հիսուսի այլակերպությունը (Մատթ. ԺԷ, Մրկ. Թ, Ղկս. Թ), ինչպես նաև արժանահավատ միստիքներուն տեսլական հափշտակությամբ Աստուծո հետ միանալու և լուսավորվելու փորձառությունները՝ օրինակ են փրկության միստիք ըմբռնումին:

Մարմնավոր կյանքի մեջ, սովորական մարդոց համար, ըստ Օգոստինոսի, փրկությունը մարդու կամեցողության, կյանքի և գործունեության կատարյալ ներդաշնակումն է Աստուծո կամեցողության հետ, որ հայտնի է մեզ մասնավորաբար Հիսուս Քրիստոսի անձովն ու վարդապետությամբը և Աստվածաշունչով:

Երբ մարդ հաջողի ներդաշնակիլ Աստուծո հետ, մեղքը կվերնա, մարդը քավությամբ և ներումով կսրբվի, երկինքի արքայությունը աշխարհ կու գա և կհաստատվի հոգիներու մեջ, մարդը կազատի Աստուծո և նմանին դեմ մեղանչելու տկարութենե և խղճահարութենե, երկրի վրա կտիրեն արդարությունն ու խաղաղությունը, մարդոց մեջ կծավալին սերն ու հաճությունը, բարի կամեցողությունն ու բարի գործը առանց եսականության և չարաշահության:

Նոր Ուխտի մեջ փրկության հարցը սերտորեն կապված է երկինքի արքայության և հոգիի անմահության հետ;

Հիսուս կավետարանե Աստուծո թագավորության մոտեցումը:

— Ապաշխարեցեք, վասնզի երկինքի թագավորությունը մոտ է (Մտթ. Դ 17):

— Բայց դուք նախ Աստուծո թագավորությունը խնդրեցեք (Ղկ. ԺԲ 31):

— Թող Քու թագավորությունդ գա (Մտթ. Զ 10):

Ըստ ս. Պողոսի Հիսուս Քրիստոսի հարությունը երաշխիքն է մեր հարության և անմահության:

— Որովհետև Աստուծո համար վկայություն տվինք թե Ինք մեռյալներեն հարուց Քրիստոսը (Ա Կորնթ. ԺԷ 15):

— Թե որ միայն այս կյանքիս համար հուսացած ենք Քրիստոսի, մենք բոլոր մարդերեն ավելի խղճալի ենք (Ա Կրնթ. ԺԵ 19):

Վասնզի ինչպես որ Ադամով ամենքը կմեռնին, այնպես ալ Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան (Ա Կրնթ. ԺԵ 22):

Բ

Աստված կստեղծե մարդը, զայն կօժտե բանականությամբ և ազատությամբ: Բայց մարդը չապրիր և չի գործեր Աստուծո հանության համաձայն: Ան իրեն շնորհված ազատությունը գեշ կգործածե, կըմբոստանա, պատվիրանազանց կլինի, կմեղանչե և կըվշտացնե զԱստված: Արարիչին և արարածին սերտ հարաբերությունը կավրվի: Մեղքը կիշխե: Մարդը կիյնա: Հուսախաբություն, դժգոհանք, եսասիրական արարքներ կհետևին իրարու: Անկումը մարդը կմղե դեպի կործանում և մահ:

Բայց Աստված իբր գթառատ հայր չուզեր որ մեղավորը կորսվի, այլ կկամի անոր դարձն ու փրկությունը:

— «Ասէ Ադոնայի Տէր, ոչ կամիմ զմահ ամբարշտին, որպէս զդառնալ ամբարշտին ի չար ճանապարհէ իւրմէ և զկեալ (Եզկ. ԼԳ 11):

Ասոր համար ալ Աստված աշխարհ կղրկե իր միածին Որդին Հիսուս, որպես միջնորդ և հաշտարար:

— Վասնզի Աստված այնպես սիրեց աշխարհ, մինչև իր միածին Որդին տվավ, որպեսզի ով որ Անոր հավատա՝ չկորսվի, հապա հավիտենական կյանք ունենա (Հվհ. Գ 11):

Մարդն ալ, որպեսզի մեղքե սրբվի, հավիտենական դատապարտութենե ազատի և իր գոյության նպատակին հասնի, հարկ է որ զղջա, ապաշխարե, և իբր Փրկիչ ընդունի Աստուծո Որդին Հիսուսը: Ան պետք է հավատա Քրիստոսի անձին և գործին, Ավետարանին, խաչի մահվան, հարության և կատարած ամբողջական փրկագործության: Ան պետք է հետևի Ավետարանին և վկայե թե Հիսուս Քրիստոս է հավիտենական կյանքը, հարությունը, ճանապարհը և ճշմարտությունը:

Փրկությունը, Աստուծո հայտնած անճառելի շնորհքին երախտագիտությամբ ընդունելեն և խոստովանելեն զատ՝ կապ ունի նաև մարդուն Աստուծո և ընկերոջը հանդեպ բռնելիք ուղիղ ընթացքին:

Մարդու հարաբերությունը Աստուծո և ընկերոջ հանդեպ ուղիղ և արդար կլինի, երբ նա հոգիով և ճշմարտությամբ պաշտե զԱստված, անձին պես սիրե ընկերը և պահի Աստուծո պատվերները:

Պողոս և Հակոբոս առաքյալները փրկության միջոց կհամարին հավատքը և գործքը, որոնք բնականաբար զիրար կլրացնեն:

Ս. Պողոս մասնավորաբար կշեշտե հավատքին անհրաժեշտությունը:

— Եվ արդարը՝ հավատքեն պիտի ապրի:

— Բայց մենք չենք քաշվիր որ կորսվինք, հապա կհավատանք որ մեր հոգին փրկվի (Եբր. Ժ 38—39, ԺԱ):

Իսկ Հակոբոսը հատկապես կշեշտե գործքին կարևորությունը:

— Քանզի ինչպես որ մարմինը առանց հոգիի մեռած է, նույնպես ալ հավատքը առանց գործքի մեռած է (Հկր. Բ 14—26):

Աստուծո Որդիին՝ Հիսուսի Քրիստոսի հավատալը և Ավետարանին համաձայն ապրիլն ու գործելը, կբանան ճամբան Աստուծո թագավորության աշխարհ գալուն, և մարդուն երկինքի արքայությունը մտնելուն, այլ խոսքով առավել և հավիտենական կյանքի, անմահության, որոնց հասնիլն է փրկությունը:

Երկինքը հոն է ուր որ է Աստված:

Երկինքի արքայությունը այնտեղ է ուր կկատարվի Աստուծո կամքը:

Երկինքի արքայությունը, զոր կավետարանե Քրիստոս, մարդկայինե ավելի աստվածային բան մըն է, իմացք մը և՛ ներկա, և՛ ապագա: Ան վեր է միջոցեն և ժամանակեն: Ան հոգեկան վիճակ մըն է, հոգեկան թագավորություն մը, զոր ս. Պողոս կբացատրե սապես:

— Աստուծո արքայությունը կերակուր և խմելիք չէ, հապա արդարություն և խաղաղություն ու խնդություն սուրբ Հոգիով: Քանզի եթե մեկը այս բաներով կծառայե Քրիստոսի, Անիկա հաճելի է Աստուծո և գովելի մարդոց (Հռմ. ԺԴ 17—18):

Այս կապակցությամբ մեջ կբերենք նաև Ավետարանի սա դրվագը:

— Ու երբ փարիսեցիները հարցուցին իրեն (Հիսուսի) թե Աստուծո թագավորությունը ե՞րբ պիտի գա, պատասխան տվավ անոնց և ըսավ. Աստուծո թագավորությունը դուրսեն երևցած բաներով չի գար: Ու պիտի չըսեն թե ահա հոս է, կամ ահա հոն է, վասնզի ահա Աստուծո թագավորությունը ձեր ներսն է (Ղկս. ԺԷ 20—21):

Ուրեմն ուր որ է Աստուծո թագավորությունը, որուն հոգիին մեջ որ է երկինքի արքայությունը, այնտե՛ղ է, անո՛րն է փրկությունը:

Գ.

Քրիստոնեությունը կընդունի թե տիեզերքը արդյունքն է Աստուծո ստեղծագործության, և ոչ թե պատահարի կամ քմահաճույքի, թե մարդ և աշխարհ որոշ նպատակ ունին Աստուծո փառքին և ընդհանուր բարիին համար, թե երբ յուրաքանչյուր մարդ աշխարհի վրա ծառայե իր կոչումին և հավատա Քրիստոսի, կարբվի մեղքին ապականութենեն և կարդարանա:

Փրկությունը իրագործելու համար, քրիստոնեությունը կձգտի այժմեն երկրի վրա հաստատել երկինքի արքայությունը, օգտագործելով նյութական և բարոյական այն բոլոր միջոցները, որ հնարավոր կդարձնեն ավետարանական սիրո, եղբայրության, հավասարության, խաղաղության, իրավունքի, արդարության և բարգավաճումի սկզբունքներուն իրականացումը:

Ահա ճամբան հին մարդը նոր արարած ընելու, նոր երկինք և նոր երկիր ստեղծելու, Աստուծո թագավորությունը երկրի վրա հաստատելու, անձին և ընդհանուրին փրկություն գործելու:

Փրկությունը միայն հանդերձյալ կյանքի մը երանական խոստումներուն հասնելու մեջ չէ, այլ մանավանդ ներկա կյանքը շենշող և երջանիկ դարձնելու, մեղքը վերցնելու, մեղքե սրբվելու, քավություն և թողություն գտնելու, մտատանջութենե և խղճահարութենե ազատելու, ճշմարիտ աստվածգիտության հասնելու, աշխարհի վրայեն տառապանք, կարոտություն, ցավ և նեղություն մեղմացնելու և չքացնելու մեջ է:

Երբ մարդոց պակասությունները դարմանվին, անոնց բոլոր կարիքները հայթայթվին, երբ աշխարհը կարենա անարգել բարգավաճիլ ու զարգանալ, այն ատեն է որ ներկա կյանքին մեջ իսկ մարդուն կվիճակվի հավիտենական երանությունը:

Ասիկա է փրկության ամենեն այժմեական և գործնական վարդապետությունը:

Դ.

Փրկությունը՝ թե՛ հայեցողական և թե՛ գործնական իմաստով՝ իտեալ մըն է, անհասանելի կարելիություն մը, իմանալի իրողություն մը զորութենականությամբ լեցուն:

Իզուր տեղ չէ որ արդի աստվածաբաններեն Պոլ Տիլլիք զայն կնմանցնե մանուկի մը որ «իրավ է բայց ոչ իրավ, պատմության մեջ է բայց ոչ տակավին պատմական, անոր բնությունը տեսանելի է և անտեսանելի, այստեղ է ան և դեռ ոչ այստեղ...: Ան որ կուզե միայն տեսանելի փրկություն մը, նա չի կրնար տեսնել աստվածային մանուկը մսուրին մեջ, ինչպես որ չի կրնար տեսնել մարդուն աստվածությունը խաչին վրա և աստվածային գործերու անմեկնելի ճամբաները: Փրկությունը մանուկ մըն է որ երբ մեծնա կխաչվի: Ան որ կրնա տեսնել զորությունը տկարության, ամբողջը կոտորակի, հաղթանակը պարտության, փառքը տառապանքի, անմեղությունը հանցանքի, սրբացումը մեղքի և կյանքը մահվան մեջ, միայն նա կրնա Սիմեոն Ծերունիին պես ըսել «Տեսին աչք իմ զփրկութիւն քո» (Ղկս. Բ 30)*:

Փրկության վարդապետությունն ընդունելու և փրկություն գտնելու միջոցը ս. Հոգիով հորդող սերն է Աստուծո և նմանին, ասոր համապատասխան հավատքն ու գործքը, որ շնորհիվ Հիսուս Քրիստոսի կենարար մահվան և Ավետարանի քարոզության կիրականանա, իբր քավություն, արդարություն և հաշտություն, Աստուծո, նմանին և անձին դեմ մեղանչող մարդու համար (Հռմ. Ե 8—10):

Նյու Յորք
1979

* Paul Tillich, The New Being, Scribners, New York, 1955, p. 95.